Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Աշխարհագրություն» /8 դասաժամ/, «Երաժշտություն» /8,5 դասաժամ/, «Կերպարվեստ» /9 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3×4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ), (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ)
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 նավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու դեպքում/.
- <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի առկայության դեպքում նաև 2-րդ կետի/ պահանջվող համապատասխան փաստաթուղթ.
- <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ ամեն օր ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. սեպտեմբերի 17-ին ժամը 15^{00}–ին**, Գրիբոյեդովի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արմավիրի մարզ Արաքս համայնք գյուղ Գրիբոյեդով Նար-Դոս 1:
Տեղեկությունների համար զանգահարել 093-680- 190 հեռախոսահամարով: